Ц-10319

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«29» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0250-23

Ձեռնարկողը՝ ***«Եռյակ Կապիտալ» ՍՊԸ***
ք. Էջմիածին, Շահումյան 48 փ., 43 բն.

Գործունեությունը՝ ***Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Կարճիկյան 1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Վաղարշապատ համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0250-23

«29» 12 2023թ.

«Եռյակ Կապիտալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Կարճիկյան 1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Եռյակ Կապիտալ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /«Գ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Էջմիածին, Շահումյան 48 փ., 43 բն.

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի համալիրիի նախագիծը նախատեսվում է իրականացնել Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Կարճիկյան փող. 1 հասցեում Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի կողմից 31.03.2023թ. տրված N CPP0-0000-5322 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով «Եռյակ Կապիտալ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի սահմաններում: Բազմաբնակարան բնակելի շենքի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 21072023-04-0066 վկայականը, տարածքի տեղագրական հանույթը, 2022թ. «Երևանի պետական համալսարանի երկրաբանական հետա-զոտությունների կենտրոն» կողմից իրականացված ինժեներաերկրաբանական հետազոտություններն ու եզրակացությունը, 2022թ. «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից իրականացված նախագծվող բազմաբնակարան բնակելի համալիրի երկրաֆիզիկական ուսումնասիրություններն ու եզրակացությունը, NCPP0-0000-5322 նախագծման թույլտվությունը՝ տրված 31.03.2023թ.: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Էջմիածին Կարճիկյան 1 հասցեում, իրենից ներկայացնում է կառուցապատումից ազատ հողամաս՝ 4,4573 հա տարածքով: Համաձայն անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, նշված հողատարածքը պատկանում է «Եռյակ Կապիտալ» ՍՊԸ-ին: Հողամասի

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Տարածքի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 12573 քմ: Տարածքի կառուցապատումը նախատեսված է իրականացնել փուլերով՝ 1-ին փուլ՝ «Ա» բլոկ/մասնաշենքեր՝ կառուցապատման մակերեսը՝ 4246 քմ, 2-րդ փուլ, «Բ» բլոկ/մասնաշենքեր՝ կառուցապատման մակերեսը 4519 քմ, 3-րդ փուլ, «Գ» բլոկ/մասնաշենքեր՝ կառուցապատման մակերեսը 3808 քմ: Համաձայն նախագծային լուծումների բնակելի համալիրը իրականացվելու է երկաթ-բետոնյա կարկասային կոնստրուկտիվ համակարգով: Մասնաշենքերի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է, որի սխեմաներն իրենից ներկայացնումեն երկու ուղղություններով կոշտ հանգույցներով, շրջանակային հիմնակմախք՝ ստորգետնյա և վերգետնյա հարկերով: Հիմքերը միաձույլ ե/բ 90սմ հաստությամբ սալեր են, վերջիններս ամրանավորված են երկայնական ձողերով և ուղեժացված լրացուցիչ և լայնական ձողերով: Հիմքերը նախատեսված են B25 դասի ծանր բետոնով: Բազմաբնական բնակելի համալիրը բաղկացած է լինելու 3 բլոկներից (Ա, Բ, Գ), որոնցից յուրաքնչյուրը բաղկացած է լինելու Ա, Բ, Գ, Դ և Ե մասնաշենքերից: Բոլոր մասնաշենքերն ունենալու են 9-12 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկեր: Վերգետնյա հատվածի առավելագույն հարկայնությունը կազմում է 12 հարկ՝ սկսած հողի վերին նիշից: Հարկերի բարձրությունները կազմում են. նկուղային հարկում՝ 4,55մ, առաջին հարկում՝ 4,2մ, մնացած հարկերում՝ 3,3մ: Բնակարանների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 1500, որոնք կունենան 40-320 քմ մակերեսներ՝ ներառելով նաև բացօդյա պատշգամբային տարածքները, որոնք արտակարգ իրավիճակների դեպքում ծառայելու են նաև որպես վթարային ելքեր: Բնակարանների մուտքերը կազմակերպված են օդային գոտու բաց անցումների միջոցով: Ստորգետնյա ավտոկայանատեղիների ընդհանուր քանակը նախատեսվում է շուրջ 520, որոնց համար հատկացված ստորգետնյա տարածքները նախատեսվում է կազմակերպել երկակի գործառնական նշանակությամբ՝ մասնավորապես նաև որպես թաքստոց: Բացի ստորգետնյա հատվածներից ավտոկայանատեղիներ նախատեսված ենՆաև բացօդյա հատվածներում:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ:

- կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերես՝ 44573 քմ,
- կառուցապատման մակերես՝ 12573 քմ,
- կանաչապատման մակերես՝ 17830 քմ,
- ճանապարհ, մայթ և այլն՝ 14170 քմ:

Բնակելի համալիրի մասնաշենքերը նախատեսվում է իրականացնել բարձր էներգաարդյունավետության հիմնական մեթոդների կիրառմամբ: Համալիրի էներգաարդյունավետությունը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին:

Կառուցվող բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է լիցենզավորվածկազմակերպության կողմից՝ պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի և

ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները:

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածին Կարճիկյան 1 հասցեում նախատեսված բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջեռուցումն ու օդափոխության համակարգերի տեխնիկական նախագիծը կատարվել է լիցենզավորված կազմակերպության կողմից՝ համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Համալիրում նախատեսված է ջրային ջեռուցման երկխողովականի համընթաց շարժումով համակարգ: Ջերմատարը ջուրն է՝ 80-65^{0}C, ջեռուցման խողովակները պոլիպրոպիլենային՝ PPR, PN20: Յուրաքանչյուր բնակարանում նախատեսվում է տեղադրել 24կՎտ ջերմային հզորությամբ երկկոնտուրանի տուրբոկաթսա: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են ալյումինե ռադիատորներ, որոնց ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ ավտոմատ փականներ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Չտեսակավորված կենցաղային աղբը (ծածկագիր՝ 9120040001004), որի ընդհանուր քանակը շինարարության յուրաքանչյուր փուլի համար կանխատեսվում է մոտ 12 տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և

հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

- Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:
- Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:
- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:
- Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:
- Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացումը:
- Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանկացույցի:
- Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սամանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:
- Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:
- Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանք պաշտպանությանը շին. գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի (ներառյալ՝ մշտադիտարկումները) գումարային գնահատումը մոտ 30 մլն. ՀՀ դրամ է:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

▪ Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

Մշտադիտարկումների համար շինարարության ողջ ընթացքում նախատեսվում է հատկացնել 5 760 000 դրամ:

Պատճառաբանական մաս. Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտում ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
- Շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտության դեպքում իրականացնել ջրցանի ծավալների ավելացում:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Կարճիկյան 1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան